Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 - 32 - 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

№ԼՄ/Լ Հ025/31

«03» 03 2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ ԼՄ/ԼՀ025/30 գրությամբ ուղարկված կից փաստաթղթերում առկա են մեխանիկական սխալներ, ուստի Ձեզ եմ ներկայացնում ուղղված տարբերակը:

Առդիր 4 թերթ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«22» 02 2017թ. հեռ. 093-32-22-39

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 05-Ա

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22 -Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 22-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ
Լեռնանցք համայնքի ավագանու 2017թ-ի փետրվարի 22-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Արամ | [signature] | | |
| Մանուկյան Էդիկ | [signature] | | |
| Չախոյան Արսեն | [signature] | | |
| Վարդանյան Սամվել | [signature] | | |
| Վիրաբյան Կարեն | [signature] | | |
| Օհանյան Յուրիկ | [signature] | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ [signature] Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 22 » 02 2017 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11 փ տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 06-Ն

## ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնանցք համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Լեռնանցք համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Առաքելյան Արամ | | | |
| Մանուկյան Էդիկ | | | |
| Չախոյան Արսեն | | | |
| Վարդանյան Սամվել | | | |
| Վիրաբյան Կարեն | | | |
| Օհանյան Յուրիկ | | | |

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արգարյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք
համայնքի ավագանու 22.02.2017թ.
թիվ 06-Ն որոշման

# I. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում համայնքապետարանի սեփական եկամուտները կատարվել է 107%-ով: 2016թ-ին համայնքի եկամուտները հիմնականում ձևավորվել են՝

1.Գույքահարկ – նախատեսված - 2.210.000 դիմաց – 2.546.000 դրամ

2.Հողի հարկ – նախատեսված - 1.557.000 դիմաց – 1.624.170 դրամ

3.Հողի վարձ. դիմաց վճար – նախատեսված - 576.000 դիմաց – 420.000 դրամ (նախորդ տարիների ապառքի պատճառով)

4.Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ –նախատեսված – 26.540.000 դիմաց– 26.540.000 դրամ

5.Տեղական տուրքեր և վճարներ – նախատեսված – 572.000 դիմաց – 534.500 դրամ (բյուջեով նախատեսված է եղել շին. թույլտվություն, որի համար չեն դիմել ):

Համայնքապետարանի կողմից կատարված ծախսերն ըստ խմբերի՝

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ– 21.644.432 դրամ, որն իր մեջ ներառում է 14.833.552 դրամ աշխատավարձ և վրաեկ, իսկ մնացած 6.810.880 դրամը ծախսվել է՝

| | | նախատեսված | | ծախս |
|---|---|---|---|---|
| 1. 4212 - Էներգետիկ ծառայություններ | - | 1.140.000 | - | 876.800 |
| 2. 4214 - Կապի ծառայություններ | - | 251.800 | - | 241.220 |
| 3. 4215 - Ապահովագրական ծախսեր | - | 100.000 | - | 65.000 |
| 4. 4216– Գույքի և սարքավորումների վարձակալություն | - | 200.000 | - | 80.000 |
| 5. 4217 - Արտագերատեսչական ծախսեր | - | 120.000 | - | 30.000 |
| 6. 4221 - Ներքին գործուղումներ | - | 100.000 | - | 100.000 |
| 7. 4232 - Համակարգչային ծառայություններ | - | 192.450 | - | 172.800 |
| 8. 4234 - Տեղեկատվական ծառայություններ | – | 58.500 | – | 24.700 |
| 9. 4252 - Մեքենաների և սարքավորումների | – | 250.000 | - | 250.000 |
| 10. 4261 - Գրասենյակային նյութեր | - | 450.000 | - | 400.000 |
| 11.4264 - Տրանսպորտային նյութեր- (մարդատար ավտոբուս) | – | 1.900.000 | – | 1.841.500 |
| 12. 4266 - Առողջապահական և լաբորատոր | – | 100.000 | – | 100.000 |
| 13. 4267 - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | – | 100.000 | – | 100.000 |
| 14. 4269 - Հատուկ նպատակային այլ նյութեր | - | 1.054.060 | – | 1.054.060 |
| 15. 4823 – Պարտադիր վճարներ | - | 104.700 | – | 104.700 |
| 16. 5112 – Շենքերի և շինությունների շինարարություն | - | 500.000 | – | 500.000 |
| 17. 5122 – Վարչական սարքավորումներ | – | 2.600.000 | – | 870.100 |

Աղբահանություն և սանիտարական մաքրում

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. 4213 – Կոմունալ ծառայություններ | - | 720.000 | – | 665.000 |
| 2. 4269 – Հատուկ նպատակային այլ նյութեր | - | 1.020.000 | - | 1.020.000 |

Լեռնանցք համայնքի միջնակարգ կրթություն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | 4269 – Հատուկ նպատակային այլ նյութեր | - 580.000 | - | 580.000 |

Լեռնանցքի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | 4241 – Մասնագիտական ծառայություններ | - 194.000 | – | 192.000 |
| 2. | 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | – 409.000 | – | 405.000 |

## II. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2013-2016 թվականների քառամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքներ՝

1. Բնակարանաշինություն – 2013-2016 թվականների ընթացքում 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 29 շահառուների համար պետբյուջեի միջոցներով կառուցվել են բնակարաններ: 36 շահառու բնակարաններ շինարարության հարցը տեղափոխվել է 2017-2021 թվականների սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագիր:
2. ՀՀ պետական բյուջեի միջոցներով կառուցվել է համայնքապետարանի շենքը՝ արժեքը 38.960.000 ՀՀ դրամ:
3. Կատարվել է միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում (փոսալցման աշխատանքներ) 300 քառ.մ՝ 2.422.926 դրամ արժողությամբ:

3.1. Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում (5կմ ճանապարհահատվածի խճապատում – արժեքը 60.000 դրամ):

4. Համայնքի խմելու ջրի համակարգի բարելավում՝ կատարվել են ընհանուր արժեքով 208.000 դրամի աշխատանքներ:

Լեռնանցք համայնքի 2013-2016թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրով չիրականացված ծրագրերը տեղափոխվել են համայնքի 2017-2021 թվականների սոցիալ – տնտեսական զարգացման հնգամյա ծրագիր:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան